

ԻՐԱՅԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ

Rev. Pers. G. Kalemkarian M. chitarist. ngassa
Nº 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Գողթարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԷԼԻ

Համակ դրամ եռայն դրկի, հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՅԻՆ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎԱՌՆԱ (Պուլկարիա)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„Ira vounk“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ ցեւ դրկութիւն եւ յաւանդութեան
ներքէ միայն կը հրատարակուին աւ-
րոյնովին կամ մասամբ:
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
սեակ աւելի անգամներու համար 20 0/0
զեղծ կը լինի:

ՎԵՐԻՆ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՄԷՋ

Մշտն Եւրոպայի ճեղքապահ Տ. Բար-
գէն վարդապետի կողմանէ՝ Հայե-
րուս համար ընկերային կարեւոր
խնդիր մը յուզուեցաւ ու պահ մը
այնպէս ենթադրուեցաւ թէ խըն-
դիրը շատ սուր կերպարանք մը
առած, մօտ է արդէն լուծման մը
բաղդին արժանանալու:

Տեղն է ըսելու թէ մեր մէջ ո՛ր
եւ է կարեւոր հարց կեանքի պայ-
մանաւոր ու աստիճանական ըն-
թացքով ոչ կը ծնի, ոչ կ'ապրի և
ոչ ալ կը մեռնի, ընդհակառակն
անժամանակ երկուքով կը ծնի և
միեւնոյն ատեն լափիչ բոցերու
տակ մոխիր կը դառնայ և հարցը
օրորոցի տեղ գերզման կը դրուի
տարիներէ յետոյ վերստին արծար-
ծուելու և միաժամանակ մեռնելու
պայմանաւ: Այս ապարդիւն շըր-
ջանն է որ կ'առնեն այդ խնդիրներ
որոց ծնունդը պէտք է վերագրել
արեւմտեան նորաձեւութեանց իւ-
րացման անդուստի տեղին և մահը
հայկական անհաստատու մտքին:

Խնդիրը, զոր յուզեց Բարգէն
վարդապետ, մեր մէջ ընդունուած
ամուսնական կարգ ու սարքերուն
մինչև մէկ աստիճան բարեփոխ-
ման խնդիրն էր, քայլ մըն էր դէ-
պի կեանք, զոր սակայն կրօնի
պաշտօնեաներ դարբերէ ի վեր կաշ-
կանդեր և վախեր են անոր առջև
երջանկութեան ամեն ճամբայ. ա-
մուսնական աշխարհի մէջ հայ
կեանքը սահմանուեր է ըլլալ
խուժողութիւն մը, որ իր
տեսակին մէջ կը գերազանցէ ճոր-
տերու իշխանութեան յանձնուած
ու ճիւղաւորին օրէնքներով նուի-
րագործուած գերութիւնը: Գերին
իրաւունք ունի իր կեանքին մէջ
ամեն օր յուսալու որ օր մը աշ-
խարհի օդը պիտի ծծէ իր տիրոջ
հաւասար իրաւունքով ու ազատու-
թեամբ, մինչդեռ հայ. ամուսնական
կեանքի ազատագրութիւնը գե-
մեղմանային «դարձ, անձն իմ»
եղբերակով մը միայն կարելի է
ձեռք բերել:

Ամուսնութենէ մինչև մահ,
այս ահագին ժամանակամիջոցի
մէջ, մարդ հայրական ու մայրա-
կան ազդեցութենէ անկախ, հա-
տուն ու գիտակից, ամեն տարիքէ
աւելի խոր կզգայ ուրախութեան
և վշտի տպաւորութիւնները. ուս-
տի պէտք էր ամուսնութեան պայ-
մաններն ալ մարդուն այդ տարի-
քին մէջ ունեցած հասունութեան
հաւասար հասունութեամբ անոր
երջանկութեանը համար գծուած
ըլլային ու երբէք չը հակառակէ-
ին ոչ բնական օրինաց և ոչ ալ
ժամանակի պահանջներուն, որոնք
ինքնին ապերժանկութիւն կը պատ-
ճառեն:

Այսօր ոչ ոք կ'ուրոշայ թէ օ-
րէնքը ժողովուրդին համար է եւ
ոչ թէ ժողովուրդը օրէնքին հա-
մար և այն օրէնքը միայն զօրա-
ւոր եղած ու իր փրկարար ազդե-
ցութիւնն ունեցած է, որ ժողո-
վուրդի շահուն հետ միշտ համե-
րաշխ ընթացած ու երբէք խիլա-
խած չէ տիեզերական ընդհանուր
ու բնական անուշաճիւր օրէնքնե-
րու դէմ ճակատ ճակատի:

Ընդունինք պահ մը թէ շատ
անպարտապահութեամբ, միշտ
վայրը և ազդերու անպարտապա-
կացութիւնը ծնունդ տուած ըլլան
այս կարգի արտաւոր օրէնքներու
և մարդկութիւնը ենթարկած տե-
սակ մը հոգեկան պաշարման վի-
ճակի, որ անոր բոլորութեանց դէմ
մաքառի և բարոյական ընդհանուր
աղէտի մը առաջը առնէ. բայց
ինչ ըսենք այն յիմար խղկատա-
կութեան, որով կուզուի, գերու-
թեան աւանդական չղթան դարերով
երկարիւ, չը նայելով երբէք որ
հանդամանքները փոխուեր են,
ժողովուրդը զարգացեր է և օրէն-
քը շատ ետ մնալով, գործնականի
մէջ հաւասարիւր է պատմական
վիթխարի զեռօր մը:

Մեր մէջ այս խնդիրը յուզուե-
լէ ի վեր բարեբաղդաբար չը հան-
դիպեցանք մէկի մը, որ հակառա-
կը պնդէր. ընդհակառակը ամե-
նէն պահպանողական և ամենէն
անգործիչ հեղեղեալ Սիւրբերն ան-
գամ խոստովանեցան աղէտին մե-
ծութիւնը ու պարզուկ բացազան-
չութեամբ մը անոր ճակատագրու-
կանութիւնը վճռեցին «ինչ ըսենք
ժամանակը չէ» ըսելով:

Ըսել է ամեն մարդ սկսեալ յե-
տին պահպանողականէն մինչև
կարմիր ազատականը համաժողով
մեր ազգային ամուսնական օրէնք-
ներու բարեփոխման, միայն թէ
ժամանակի խնդիր մըն է, որ կը
յուզուի, իբր թէ ճշմարտութիւ-
նը ժամ ժամանակ ունեցած ըլլար:

Ինչո՞ւ ուրեմն անպայման կը յե-
տաձգուի այս խնդրին լուծումը
և ձմրան մէջ մահառիթմ հիւան-
դութեան մը բռնուած հիւանդը
գարմանելու համար մայիսի կեն-
սատու արեւներուն կըստապա-
տու անմիտ տրամաբանութեամբ
մը անոր կեանքը վտանգի կենթա-
կուի, ահաւաստիկ ուսումնասիրե-
լիք բուն գործը, որուն կը դառ-
նանք մօտ օրեր:

ՀԵՌԱՊԱՏԿԵՐԸ

Վերջացող 19րդ դարը իրա-
ւամբ կոչուեցաւ գիտութեանց և
ազգութեանց դար, որովհետեւ
դրական գիտութիւնները իսկապէս
զարմանալի և նոյն իսկ անսպասե-
լի յառաջդիմութիւններ ունեցան
և ազգութեան գաղափարը տա-
կաւ արծարծուելով բազմաթիւ
մեծ ու փոքր ազգերու իբրեւ պե-
տութիւն վերակազմութեան ա-
հագին պայքարներու ծնունդ տը-
ւաւ, որոնք ամեն տեղ մղուեցան
ազգային գոյութեան պահպան-
ման և ինքնուրոյնութեան անու-
նով:

Սակայն իմ կարծիքով այսքա-
նը չի բաւեր յատկանիշելու համար
վերջացող դարը, որուն վերջին
քառորդին մէջ շատ նշանաւոր ե-
րեւոյթ մը ակնբերեւ տեսնուեցաւ
քաղաքակիրթ ազգերու կեանքին
մէջ: Այնիւ զգացումներու և մարդ-
կութեան բարոյական շահերուն
հետզհետէ աւելի շեշտուած ան-
գոսնումն ու անոնց տեղ զուտ
նիւթական շահի տեղին և տնտե-
սական հաշիւներու տիրապետու-
թիւնն է այն, որ նախորդ դարե-
րէն ոչ մէկին մէջ կրցեր էր այս-
քան ուժեղ, այսքան բացարձակ
դառնալ:

Յիշե՛ք և Գիւրման պատերազմէն
ետքը մեծ տէրութիւններու բոլոր

ձեռնարկները և բոլոր քաղաքա-
կան անցքերը անժխտելի կերպով
այս կը հաստատեն, իրողութիւն
մը, որուն մանաւանդ մենք հայե-
րա, իբր իր զոհերը խորապէս հա-
մագուած ըլլալու ենք: 19րդ դա-
րուն յատկանիշներէն մէկն ալ
պէտք է ուրեմն նկատել նիւթա-
կան շահամոլութեան ոգին որ 20
րդ դարուն պիտի անցնի իբր ժա-
ռանգութիւն նախորդին:

Երեւոյթին պատճառը՝ շատ դիւ-
րահասկնալի է: Այն սարսափելի
ուժը և անդիմադրելի ազդեցու-
թիւնը, որուն տիրացած է այսօր
Դրամը և որուն առջև իշխանա-
կան գահեր ու թագեր անգամ
ստիպուած են խոնարհիլ, տար-
բեր արդիւնք չէին կրնար ունե-
նալ: Դրամը քաղաքակիրթ աշ-
խարհին մէջ տակաւ խուսափելով
ժողովուրդի հասարակ խաւերէն և
ամփոփուելով սակաւաթիւ առանձ-
նաշնորհալ շրջանակներու մէջ,
ինչպէս կը հաստատեն եւրոպա-
կան վիճակագրութիւնները, իր
երկաթէ ձեռքով կը մղէ սովորա-
կան մահկանացուներու ահագին
զանգուածները, ամենէն աւելի
ամեն բանէ առաջ հետապնդել
նիւթական շահու, զայն ամեն
բանէ վեր գերադասել՝ ապրիլ կա-
րենալու համար: Մարդիկը ժա-
մանակ չունին իրենց օրական ու-
տելիքին և խմելիքին վերաբեր-
եալ անհրաժեշտ պէտքերէն տար-
բեր բաներու վրայ մտածելու:
Իսկ հարուստ դասակարգը, որ
եւրոպական ապրանքներու ար-
տադրողը և սպառման միջնորդն
էր, նոյնքան զբաղած է իր նիւ-
թական շահերուն հոգեբովը:
Միլիոնները իրարու վրայ դիզելու
համար գործարանատէրերը ամեն
շանք և միջոց կը գործադրեն որ-
քան կարելի է շատ ապրանք ար-
տադրելու և իրօք այնքան շատ
կարտադրեն որ իրենց բնիկ եր-
կիրը անբաւական կը դառնայ
պատրաստ ապրանքներու ահագին,
անհատնում զէջերը սպառելու:
Գրացի, մօտ երկիրներն ալ ար-
դէն ունին իրենց գործարանները:
Ուստի հարկ կըլլայ Եւրոպայէ
դուրս, հեռու աշխարհներ, Աֆ-
րիկէի խորերը, Ծայրագոյն արեւ-

ւելք, երթալ փնտռել ապրանք սպառելիք տեղերը: Ապրանքը սպառելու գրամ դիզել տհա եւ ըստացի գործարանատէրին և վաճառականին միակ հոգը, բացարձակապէս առաջնակարգ մտածութիւնը, որովհետեւ գործարանները հետզհետէ կը շատնան, գիշեր ցորեկ կարտագրեն ու կարտագրեն, կարելի չէ գիրենք կեցնել արտադրութիւնները պէտք է ուրեմն սպառել, պէտք է գնող գտնել անպայման:

Հապա հնչուն գրամը, ֆինանսական գործողութիւնները. աւանք անհրաժեշտաբար միշտ նոր ասպարէզ կը պահանջեն, լայն ասպարէզ հանգիստ դառնալու և խաղալու, նպաստաւոր պայմաններով աշխարհի մէկ ծայրէն միւսը շրջագայել կուզեն, անթի փոխառուներ կուզեն, վերջինները աշխարհի ո՛ր կողմն ալ գտնուին, ինչ որ ալ կոչուի իրենց հայրենիքը, որովհետեւ Եւրոպայի դերամը, իր ապրանքին պէս այնքան առատ է որ գոնէ մասամբ ամուլ կը դառնայ, ըսել է կերպով մը կը մեռնի, եթէ օտար հեռաւոր աշխարհներ չերթայ, եւ եթէ փակուի մնայ Եւրոպայի մէջ, ուր չի կրնար գտնուի բաւական լայն ասպարէզ:

Հիմա ըսէք թէ եւրոպացի դերամատէրները, ֆրանսերէն Ռօֆիլման կըշուած շրջանակները, որ ընկերութեան խաւերէն ամենէն վերը կեցած կիշխեն աշխարհի, կրնան իրենց դրամը, շահագործելու միջոցները փնտռելէ զատ ու է բանի առաջնութիւն տալ իրենց ջանքերուն և փափաքներուն մէջ:

Գալով կառավարութիւններուն, յայտնի է որ ժողովուրդի այս ընդհանուր տրամադրութիւններէն և պէտքերէն ուժգնապէս մղուած, ստիպուած են, իւրաքանչիւրը իր երկրին համար, ճամբայ հարթել ամեն տեղ ոչ միայն դիզուած ապրանքին և պատրաստ դրամին, այլեւ շատ անգամ նոյն իսկ ժողովուրդի այն մասին որ իր հայրենիքին մէջ հացի խնդրոյն գոհացուցիչ լուծում մը գտնել չի յաջողելով, կը նախընտրէ գաղթել հեռու երկրներ, հոն իրեն լաւագոյն վիճակ մը ստեղծելու յուսով:

Օ. Գոշրգեն

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ

Բարիդ 19 յունի. 1900

Լոյս քաղաքը

Յրանաացիք և նոյն իսկ օտարներն ալ Բարիդին «Լոյս քաղաք» տիտղոսը կուտան ստէպ, անտարակոյս անոր մէջ գտնուող գրական, գիտական, գեղարուեստական, բարեգործական եւն. հաստատութիւններն ակնարկելով: Բարիդը կուզէ նիւթական տեսակէտով ալ այդ տիտղոսին ազգա-

նանալ, գոնէ իւր գիշերային լուսաւորութեամբ: Կազի ընկերութիւնը՝ հազիւ թէ ելեքտրական լուսաւորութեան սխտէմը երեւան եկաւ, Բարիդի քաղաքապետութեան հետ գաշինքներ դրաւ, քաղաքին լուսաւորութեան համար: Ըստ այդ դաշանց քաղաքապետութիւնը չէր կրնար քաղաքը ելեքտրականութեամբ լուսաւորել առանց կազի ընկերութեան համաձայնութեան: Սակայն քանի մը տարիներէ ի վեր Բարիդի մահաւանդ միծ լուսաւորներն արդէն ելեքտրական լոյսով լուսաւորուած են և քանի մը ամիսէն ալ ուրիշ շատ մը փողոցներ ելեքտրական լոյս պիտի ունենան:

Յրանաւ Անգլիոյ և Գերմանիոյ առջև

Պր. Պոպիս Պառէս «Ը ժողովուրդ» թերթին մէջ կը հմտաբարկէ և կը բացատրէ Պր. Անտրէ Եֆրատի մէկ նամակը, որուն մէջ այդ քաղաքագէտը կը ծանրանայ Յրանայի Անգլիոյ և Գերմանիոյ միեմալու ջանքին վրայ: Պր. Պառէս կը վրդափայտէ այն կարգ մը քաղաքագէտներու բռնած ուղղութիւնէն, որոնք Անգլիոյ ընդհանուր տիրապետելու համար ցուցուցած եռանդը պատճառ բռնելով զայն մարդկային ցեղի իբր թշնամի կը նկատեն և կուզեն զայն կասեցնել իւր տիրապետական ձգտումներու մէջ: Արդ Գերմանիա որ միշտ կ'ածի և որ շատ պէտք ունի տարածուելու մասնաւոր իւր վաճառականութեան համար, զօրաւոր տարր մը կրնայ լինիլ հակաբերիտանական միութեան մը: Ուրեմն քաղաքագէտներն իրենց երազն իրականացնելու համար երկու բան ընելու են, այսինքն մէկ կողմէ ժողովրդական զգացումներ զրգուել Անգլիոյ դէմ, որ շատ դժուար չպիտի լինի, վասնզի արդէն շատը եղած է նոյն իսկ Անգլիոյ վարմունքին համար և միւս կողմանէ՝ լուծելու պահել Յրանաւանցուց Գերմանիոյ դէմ ունեցած ատելութեան շարժառիթներուն վրայ և քարոզել թէ Ալգաս. Լօրէնի խնդիրը զլիւսաւոր կարեւորութիւն մը չունի: Արդ եթէ իւրօք այսօր ֆրանսական կարծիք աւելի պաշտօն է Անգլիայով քան Գերմանիայով, բոլորովին անարդար կը լինէր կարծիք թէ Ֆրանսական ժողովուրդն իւր իրաւացի ատելութիւնն ընդգէմ Գերմանիոյ բոլորովին մոռցած է: Պր. Պառէս ամեն բան իր տեղը դրած է և զորօրինակ նա ցոյց կուտայ թէ Ալգաս. Լօրէնի մէջ տիրող խաղաղութիւնն ո՛րչափ առեւտրային է: Պր. Եֆրատի նամակին հետեւանքն այն է թէ՝ ֆրանսական կառավարութեան նպատակն պէտք է լինի ֆրանսացիներուն միշտ յոյս ներշնչել կորսուած երկու նահանգներու մասին եթէ նոյն իսկ այդ տեղերու ժողովուրդներն բոլորովին Գերմանացած լինին: Պր. Եֆրատի մասնաւոր խնամքով մը ուսումնասիրած է Գեր-

մանացուց էնթրիքներն Աւստրիոյ մէջ. նա կը նախատեսէ այն վրտանգներն որոնք կրնան առաջ գալ Եւրոպական հաւասարակշռութեան մէջ եթէ Գերմանիա միջամտէ ինչ նախատեսութեամբ, երկար ժամանակէ ի վեր կը պատրաստուի այդ միջամտութեան: Նա իրաւամբ կը հաստատէ թէ Գերմանիա վտանգաւոր է ոչ այնու դի երկու ֆրանսական նահանգներու տիրած և Ռէնը բրու. նաժէ, այլ որովհետեւ անոր մինջև Գանուրը և Ալգրիականը տարածուած, Եւրոպայի մէջ իրեն նախանձելի գիրք մը պիտի ստեղծէ: Սակայն ամենէն ստիպողական խնդրով զբաղելու է, մոռնալով չէ թէ այսօր անգլիական վտանգը անմիջական է:

Ե. Յոքի մաննան տարեդարձը

Յրանական Սենեկին նախագահ Պր. Եֆրատի մահուան տարեդարձն երեկ կատարուեցաւ փեռ լաշէզ գերեզմանատան մէջ: Երեւելի ճարտասանին բոլոր անձնական և քաղաքական բարեկամներն խմբով գերեզմանատուն գացին, ճառեր խօսեցան, իսկ անոր գերեզմանին վրայ արձան մը կանգնելու համար կազմուած լանձնախումբին պատուիրակութիւնը, գեղեցիկ պսակ մը դրաւ հանգուցեալին գերեզմանին վրայ:

Ա. Սեւի եւ Մ. Դաւիթ-Բեկ

ՆԱՍՏԱԿ ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ

... խմբագիր,

Մ'օտ օրերս ձեռքս անցաւ սա վերնագրով «Վերջին թրքական վարագուծութիւններէ մնաստած տիկնոջ մը ի նպաստ» վիճակահանութեան թուղթ մը: Ինչպէս որ մէկ պաշտօնական կնիք չը կրնար, յայտնի չէ թէ ընկերութեան կուսակցութեան թէ պարզ անհատի մը կողմէ է: Եթէ կուսակցութեան մը կողմէ հրապարակ եղած է, պէտք է պաշտօնական կնիքով վաւերացուած ըլլար, իսկ եթէ պարզ անհատի մը կողմէ է պէտք է այդ անհատը կամ տիկինը ծանօթ ըլլար, որպէսզի մենք տիկիններս, ձեռք ձեռքի տալով պէտք եղած աշակցութիւնը ընէինք:

Ամեն պարագայի մէջ քանի որ թուղթը անվաւեր է մեզ նման ուրիշ աշակցելու փափաքողներ ալ կան պիտի կասկածին թէ մի գուցէ սա ալ նոր խաղ մը ըլլայ խաչագողներու կողմէ հարկւարոր ֆրանքներ դարձեալ հրապարակէն կտրելու համար:

Ուստի մեր կասկածները փորա տելու և ժողովուրդն ալ զգուշացնելու համար խորհեցանք տեղական թերթերու միջոցաւ խնդիրը հրապարակել լուսաբանելու համար:

Այրի Տիկին Մ. Միւսախան 1900 յունիս 12 Վառնա

Բ. Գ. Ներկայէս մէկ մէկ օրինակ ալ լրկուած են Շարժումի և Հայկի:

Նոյն

ՀԵՐՈՍՆ ՈՒ ԱՄԲՈՒՐ

—o—

Հերոսը ամբոխէն կը ծնի, և ամբոխը հերոսին մայրն է. որ հաւասարապէս կը գնահատէ և կը քննադատէ իր զաւկին լանու գէշ կողմերը:

Կեցցէ Տուէյ ապրի Սպանիային յաղթող Տուէյ: Խաղաղիչ ձայնիւր հազիւ թէ դադրած, ահա այսօր անկցի Տուէյ կը սուլեն այդ մեծ ծովակալը, և խեղճ տունէն դուրս չկրնար ելնել:

«Նիւ. Եօք» ձերբը» որ իր խմբագրատունէն հինգ հազար տոլար կը նուիրէր, Տուէյի Մանիլայէ վերադարձին առթիւ անոր իպատիւ ըլլալիք ընդունելութեան և շինուելիք յաղթական կամարին մարմարինէ ըլլալուն համար:

Այսօր այդ թերթը կը նշաւ. կէ զայն ամենէն կծու ակնարկութիւններով: Ինչ են այս փոփոխութեան պատճառները:

Երբ Տուէյ բռնակալ Սպանիոյ նաւատորմը խորտակած, Նիւ Եօք վերադարձաւ, ժողովուրդը զինքը ջերմ խանդավառութեամբ ընդունելով յաղթական դափնին, ըրով պատկեց զայն, և 20,000 տոլարի ժողովրդական հանգուստ կուլեցաւ վաշինկթօնի (Միացեալ Նահանգներու մայրաքաղաք) մէջ տուն մը գնուելով նուիրուեցաւ Մանիլայի յաղթականին իբր անկեղծ արտայայտութիւն հիացման Տուէյի մեծագործութեան:

Ծովակալ Տուէյի առաջին կինը մեռած ըլլալով երկրորդ անգամ ամուսնացաւ այրի տիկին հաւաքնի հետ: Որուն նկատմամբ յրաժակալը մեծ սէր կը տածէ ինչպէս Տիկինն ալ փոխադարձաբար ծովակալին միամօր որդւոյն: Երբ վաղալը իրեն նուիրուած տունը կնոջը կընծայէ. իսկ Տիկինն ալ զայն կը փոխանցէ ծովակալին տղուն:

Ահա հոս է որ ժողովուրդը կը յուզուի կը բորբոքի, անկցի Տուէյ կը պոռայ, կը սուլէ և հերոս ծովապետը կարտասուէ:

Օր մը այս մեծանուն ծովակալը մէկ քանի բարեկամներու ներկայութեան դառնութեամբ կը սէր, «Լաւագոյն էր որ կամ ես Մանիլայէ ողջ չը վերադառնայի, և կամ ժողովրդեան նուէրը չընդունէի: Եթէ գիտնայի որ ինծի տրուածը ըստ կամս գործածելու ազատ չեմ, չէի ընդունիր...» Սակայն այս ամենուն տակ գաղտնիք մը կ'ալ. և քաղաքիկեալ նըպատակ մը, որ ժողովուրդին միամտութիւնը շահագործելով անոր մոլեռանդութիւնը կը զոգոնէ օգտուելու համար:

Թէ ինչո՞ւ:

Որովհետեւ ծովակալ Տուէյ Տէմօկրատ (') կուսակցութեան կը պատկանի. ժողովուրդի հիացում

(') Միացեալ Նահանգներու մէջ երկու կուսակցութիւն կ'ալ Տէմօկրատ (Թամկալարական) և Ռէքլայի (հանրապետական) որոնց երկուքն ալ կըռուի մէջ են նախագահական ամբոխի համար:

ու խանգաղաբերութիւնը այն աս-
տիճանին հասաւ որ Տուէյ յառա-
ջիկային Միացեալ Նահանգներու
նախագահական ընտրելի առա-
ջարկեցին, և այս առաջարկու-
թիւնը ամեն կողմէն ընդունուե-
ցաւ ծախսահարկեցաւ. և մինչեւ
իսկ յաջողութիւնը անխուսափելի
երեւցաւ. ահա այս պատճառաւ
(Ռէքլարիքէն) հակառակ կու-
սակցութիւնը, կուսակցական ցած
հաշիւով մը մոռնալով Տուէյի
արժանիքն ու ծառայութիւնը,
զայն վարկաբեկ ընելու համար
ժողովուրդը յուզեց և զրգռեց ա-
նոր գէժ:

Տուէյ ի պատասխանի ի-
րեն եղած յոյժ պատուաբեր ա-
ռաջարկութեան, այդ ժողովուրդի
համեստ զաւակը իրական մեծ
հերոսը անկեղծ հայրենասէրի ոգ-
ւով և վեհանձնութեամբ կը պա-
տասխանէ. «Ես պարզ նաւաստի
մըն եմ, քաղաքականութեան
խելքս չի համարիր»:

Երբ Տուէյի այս պարզ բայց
նշանակելի խօսքերը կը լսենք.
անկարելի է որ պահ մը մեր աչ-
քին առաջ չը ներկայանան մեր
հերոսներն ալ. Ծատերը միւսան
բանտերուն մէջ. և ամեն անոնք
ալ որ հրաշքով մը ազատած են
թուրքին գաղանային ճիրաննե-
րէն և կամ մահաբոյր բանտերու
մուկ խորշերէն, հիմայ հեռու
իրենց հայրենիքէն, զատուած ի-
րենց սիրելիներէն, արտասահմա-
նի մէջ լռիկ միջիկ կը մտածեն
ազգին ցաւերուն դարման տանիլ:

Իսկ այն հերոսները, որ վայր-
կենական ազդեցութեան մը ներ-
քեւ գողցուած՝ առանց հետե-
ւանքին վրայ մտածելու, յան-
դուգն և անմիտ ձեռնարկ մը ը-
րած են. այսօր իրենց բացար-
ձակապէս անյարմար եղող հերոս
տիտղոսով արտասահմանի մէջ կը

սլքտան և կուզեն ժողովուրդի
ինքնակոչ պետը ըլլալ, ըսելով՝
«ես եմ ժողովուրդի հարազատ
զաւակը և անոր ներկայացուցիչը»
. . . պէ, ախպար քեզ ո՞վ ներ-
կայացուցիչ կարգից:

Երկու անգամ Պարսկա-թուրք
սահմանագլուխը երթալ, անգամ
մըն ալ կովկասի մէջ շրջան մը
ընել, կը բաւէ հերոս մը ըլլա-
լու. իսկ եթէ երբէք յաջողեցար
Պարսի ալ մտնել ելլել ահա կա-
տարեալ հերոս, հերոսներու հե-
րոս ես ալ կուսկած չի կայ:

Հերոս է և հերոս պիտի մնայ.
Սակայն ալ անոնց կարգն ան-
ցաւ այսօր հասկցուած է որ անձ.
նուէր և ճշմարիտ հերոսը լու-
թեամբ կը գործէ և միշտ հա-
մեստ կը մնայ. ինչպէս էր Ոս-
կան Նազարի այն անձնուէր և ող-
բացեալ հերոսը, որուն դէմ նա.
խառնեցնէր չը պակեցան: «Ի-
րաւունք»ի ճշրգ թիւը կը գուժէր
Ոսկան Նազարի մահը:

Իր կորուստը բոլոր անկեղծ սըր-
տերը ցաւեցուց և մեր աչքերէն
արցունքներ քամեց անոր անշուք
և հեռաւոր շիրմին համար:

Ամբոխը անկեղծօրէն կը կա-
րկցի անոր տառապանքներուն և
իր անձնուէր հերոսին յիշատակը
խորունկ յարգանքով մը կը պահէ:
Սակայն կան չարամիտներ,
վատողիներ, որոնք կուզեն ամ-
բոխին՝ այն յաւիտենական մանու-
կին միամտութեան օգտուել,
Տուէյ այսօր կը նախատուի,
բայց պիտի գայ օր մը որ այն
չարամիտներուն բաժին պիտի ըլ-
լայ տեւական խայտառակութիւնը
և ամբոխը եթէ ոչ իր խելքով
չոնէ իր բնազդովը նորէն յար-
գանք պիտի ողջունէ իր անձ-
նուէր, անշահախնդիր հերոս զա-
ւակը:

Գառնիկ Վարդէնի
99 Դեկ. 29
Ուսթըր

ԼՐԱՔԱՂ

Կովկասեան թղթակցութիւնէ մը
հետեւեալ շահեկան լուրերը կը
քաղենք.

«Բազուի փոխ առաջնորդ Տէր
Եղիշէ քնն. Գեղամեան, հրեք
տարի առաջ Յունագրական երախայ
մը լուսաւորչական ծէսով մկրտած
ըլլալուն համար, պետական դա-
տարանը վճռեց է յիշեալ քահա-
նան կարգաւոր ընել:»

Կովկասեան թղթակցութիւնը կը յա-
րէ թէ այս մասին ռուսական օ-
րէնքը շատ խիստ է, մանաւանդ
երբ մկրտող քահանան օրէնքը գիտ
նալով գիտակցաբար կընէ. նոյն-
պէս կը հաղորդուի որ Տէր Եղի-
շէն ըստ սովորութեան կաշառք
առնելով գործած ըլլայ. շատ հա-
ւանական է որ քահանան ոչ միայն
կարգադրել ըլլալու այլ և պատ-
ժոյ ալ ենթարկուի:

—Պէտարապոյի Էջմիածնական
կալուածներու կառավարիչ Եփրեմ
վարդապետ գործած զեղծումնե-
րուն և անկարգութեանց պատճա-
ռաւ Ս. Հայրապետի հրամանաւ
պաշտօնանկ եղած է:

—Ս. Հայրապետը որ առանձին
շրջաբերականով խստիւ պատուի-
րած էր Ռուսահայ կղերին հայե-
րէնէ ուրիշ լեզուով երգում չընել.
այս անգամ Էջմիածնայ Սինօգն
ալ վաւերացուցած է Հայրապետա-
կան հրամանը:

Վերոյիշեալ Հայրապետական
խիստ հրամանին առթիւ ծանօթ
հայատեաց Ռուտ թերթ «Նովոէ
Վրէմիայ»ի Հայրապետին ուղղեալ
գրած յօդուածին մէկ կարեւոր
մասը աւելորդ չինք համարիր հոս
գնել:

«Հայ լեզուէն հեռանալու մասին
ոչ մի խնդիր եղած չէ. այլ պար-
զապէս առաջարկուած է նոր զին-»

ւորներուն ռուսերէն լեզուով եր-
գում ընել. և ահա Հայոց կաթո-
ղիկոսը, Էջմիածնայ վանահայրը
աղմուկ կը հանէ. Տգիտութեամբ
ընէ թէ մասնաւոր դիտումով:

«Եւ թէ հայ լեզուն հայ եկե-
ղեցոյ կանոնական լեզուն չէ, ո-
րուն ապացոյցն է որ շատ տեղեր
հայերէն չգիտնալուն պատճառաւ
օտար լեզուներով կը կատարուին
եկեղեցական արարողութիւնները:
Հայոց կաթողիկոսը դէպի ան-
սխալականութեան կը ձգտի, շատ
ծիծաղելի է. Մենք չենք կարծէր
որ այս խնդիրը ատով կը վերջա-
նայ, որովհետեւ կաթողիկոսի ա-
ռած քայլը ցոյց կուտայ թէ կով-
կասեան իշխանութեան իրաւունք-
ներուն դէմ վէճ մղել կուզէ:

—Սրբազան Հայրապետը որ
Կովկասեան թեմերը այցելել մը-
տադրած էր, և այս առթիւ հարկ
եղած պատրաստութիւններն ալ
տեսնուած էին. Արդ կիմանանք
թէ վերջին պահուն յանկարծ յե-
տաձգել է իր այս որոշումը:

—Բաղէշի նահանգին մէջ տի-
րող խեղճութիւնը վերջին ծայր
հասած է եղեր: Հակառակ տիրող
ահաւոր աղքատութեան կառավա-
րութեան կողմէ ծայրագոյն ան-
գլխութեամբ հարկերը կը հաւա-
քուին և այս ընդհանուր անօթու-
թեան դէմ գտնուած քիչ մը ու-
սելիքներն ալ բռնի կառնուին ժո-
ղովուրդին բերնէն. հիւանդութիւն-
ները և մահերը շատցած են:

—Օրմանեան Պատրիարք նոր
աղերսագրով մը Սուլթանէն խն-
դրած է, վառի և Բաղէշի մէջ
գործուած խեղճութեանց հեղի-
նակներուն պատժուելը: Սուլթանը
խոստացեր է խիստ քննութիւն մը
բանալ և եթէ հարկ է պատժել
չարագործները:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (14)

ՆԷՏԱ

(ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱԾՐ)

—Ըսէ ասոնց որ չը տանջեն այս
խեղճ մարդը. ըսէ որ սպասեն քիչ մը.
ես ամեն բան պիտի պատմեմ քեզի, կը
պաշտօնաւ հրամայէ որ կենան:

—Դուն անոնց հետ մէկտեղ էիր,
հարցուց աղան մատովը պառաններն
ու Տէլիպաշիները ցցունելով:

Մանկահասակ թրքուհին պատմեց
աղային բոլոր պատահանքները եւ աղա-
կեց որ ներէ հայրիկիս, որ բարիք ը-
նել ուզած էր: Երկուստարդ կիներ իւ-
սած ժամանակ, թիւրքը կը լռէր ու
չբնականաբար կը խածնէր, ու երբ
պատմութիւնը աւարտեց, պառաննե-
րէն մէկը աղային անջնակ կենալով ը-
սաւ թէ Հայէ կեալու իրերը կը պաշտ
պանէ, թէ նա իսաւ-Բէյգլամպէրին եւ
կեալու իրերու Աստուծոյն աղօթած էր
և կեալու իր մը օղնած էր յափշտակե-
լու համար այն աղջիկը որ աղայի հա-
րէմին զարդը պիտի լինէր:

—Ուր է աղջիկը, գոչեց թիւրքը,

ու գայրոյթէ կը դողար: Մտիկ ըրէք,
աղաներ, ըսաւ Տէլիպաշիներին. գա-
ցէք գտէք այդ աղջիկը, ինծի բերէք
զայն կենդանի կամ մեռած: Գտէք
զայն յափշտակող կեալու իրն ալ.
Իսկ դուն Հայէ, դու անգամ մը իմ
հարէմին առանին գործերին մի խառ-
նուի: Այսուհետեւ դուն իմ կինս չես,
այլ ծառայ, գերիս. . .

—Աղա՞ծք ըրէ ինծի, միայն ներէ
սա մարդուն ու մի փնտռե՛ր աղջիկը,
լսաւ մանկահասակ կինը:

—Դու կը համարձակու աղաջկու
ինծի այդ զգուշի շունդին համար,
այդ անհաւատ կեալու իրերին համար:
Գու՛ն ա՛լ կինս չես, մահաշունչ քոմ,
անհաւատ կեալու իր, գոչեց աղան եւ
խաղաղանով մանկահասակ կնոջ ուսին
դարկաւ: Դուստրի կինը խաղաղան
բռնելով համբարեց:

—Բայց ինչո՞ւ կը ծեծես ինծի, ին-
չո՞ւ կը հայհոյես եւ ինչո՞ւ գիտ անհա-
ւատ կին ու գարշելի քած կը կոչես:
Ես քեզ կաշաշեմ որ յարիւր ընես ու
ներիս տարաքաղ մարդու մը. իսկ
դուն կը ծեծես ու կը հայհոյես ինչ
դէպով ինչ ըրած եմ քեզի: Հէգ աղջի-
կի մը օղնեցի որ աղա՞տ ինքզինքը:
Իսկ դուն կը ծեծես ինծի, կարծես
անհնարելի չարիք մը գործեր եմ: Եթէ

իմ ըրածը մեղք է, դիտցած անունդ
տուր ինծի: Պատժէ՛ գիտ, եթէ դէշու-
թիւն ըրած եմ. . . կըսէր մանկա-
հասակ կինն ու կուլար:

Աղան սկսաւ քիչ մը աւելի մեղմով
եւ աւելի գլխով խօսիլ:

—Միթէ քրիստոնեան մարդ է Կեա-
վուր չուն մը սպաննելը մեղք է մի-
թէ: Այն որ կը պաշտպանէ կեալու ի-
րերը, մեծ մեղք ըրած կըլլայ, իսկ ան
որ կը մեղքնէ հոգի կը փրկէ: Ասա-
ւած այսպէս ըսած է միւր մարգարէին.
«Գացէ՛ք ու տարածեցէ՛ք իմ կամքս:
Ամեն ինչ որ կը հակառակի, ձեր սը-
րին տակ պէտք է իյնայ: Այն որ իմ
խօսքի չի լսէր ու կը վախնայ թշնա-
միներէն նա պիտի անշուքի դժոխքի
մէջ: Կը տեսնես հիմայ որ մեծ յան-
ցանք գործած ես: Ես պէտք էր լսե-
մը պատժէի քեզ, բայց սիրտս բարի է
ու քեզ ներել կուզէ: Հայտէ՛ հարէ՛մ-
լիքս գնա ու պահուրդէ՛ վայ՛ քեզի
եթէ ուրիշ անգամ համարձակու այսօ-
րուան բրածիդ պէս չարիք մը գործե-
լու: Մի՛ն դնա. . . Իսկ թէ ինչ
պիտի ընեմ այդ չարագործներին, այդ
իմ գործս է: Հայտէ՛ գնա ու աւելի մի
բարկացներ ինծի: Երբ որ աղջիկը բե-
րին, քեզ կը կանչեմ գուրս ցուցնելու

համար էթէ ինչ է տին խալմների
պարտականութիւնները:

—Կաղաչեմ, աղա՛, ներէ աս մար-
դուն, ներէ աս մարդուն ինծի համար,
Աստուծոյ համար, քու մօրդ համար,
ամենքի համար ըսաւ զեռատի կինը:

—Դու՛րս, գուրս պոռաց թիւրքը:
Երկուստարդ կինը գուրս եղաւ:

Հայրիկիս մօրթը կը հանեն եւ գա-
մերով կը գամեն վանդակապառին:
Մարմինը, մօրթաղերձ մարմինը ցիցի
վրայ նստեցուցին եւ մօրթին քով
կանգնեցին: Ո՛հ՛ղճ հայրիկ, ինչ չար-
չարանք կրած է նա:

—Վերջը ի՞նչ եղաւ մամիկ ըսի ես
անհամբերութեամբ:

Մամս սկսաւ լալ ես ալ սկսայ լալ:
—Կեցի՛ր քիչ մը, որդեակ, հանգս-
տանա՛մ, ըսաւ մամս. բայց քանի մը
վայրկեան վերջը իր ծիր աչքերով ին-
ծի նայեցաւ, բազուկովը շոյեց գլուխս
ու ըսաւ. «Ես կը կարծէի որ հայրդ
պապին վրէժը պիտի լուծէ, բայց խա-
բուցայ: Դուն կտրիճ եղիր. Աստուծո
սայ որ գոնէ դուն վրէժը լուծես:

—Ի՞նչպէս վրէժ լուծեմ, մամիկ:

—Արեւն ընդ արեան, որդի:

(Շարունակելի)

ԹԻՒՐԻԱ ՀԱՎԱՏԻԱԹԸ

Սթանպոլում «Կապէթ» տը
Ֆրանսիացիները աւելի տեղի
տեսի վերաբերյալ տիր.

Տամատ Մահմուտ բաշա քէն.
տիրին Սթանպոլ տեղում տեսի
իշխն Բարիս թուրք սեփարէթ.
հանէսինէ շու եօլտա պէյանաթ.
տա պուլունմուշ տըր.

1. Պայտ հայաթէ մէկիս վիւ.
քէլայա մէմուր թային օլունուպ
պէյանը րէյէ հազգը պուլունմա.
սը.

2. Մաաշընըն թէտիյէսինի
Օսմանը պանգասը թարաֆընտան
թէէմին օլունմասը.

3. Քէնտիսինէ պիր կէօնա զուլմ
օլունմայաճաղընը վատ օլունուպ
թէէմինաթ լազըմէ վերիմէսի.

4. Մախտուլարընըն շուրայի
տէվէթ ազալընըն թայինի.

5. Պաղտատ վէ Մուսուլ վի.
լայէթէրինտէքի պաթաղընըն
քուրութմագ վէ գանալար աշմագ
իշխն քէնտիսինէ իմթիյազ վէ.
րիմէսի.

—Սթանպոլում «Թայմըզ» կա.
զէթասընա աթիտէքի հափատիսի
վերիմէսի տիր.

Պիր վազըթուման պէրու միւսլի.
մանլար պէյինտէ մէվնուտ խօշ.
նութուզընըն նիհայէթ վէրմէք
վէ լազըմ կէլէն թէտպիրլէրի էլէ
ալմագ իշխն պիր գոմիսին թէշ.
քիլի լուլթան թարաֆընտան գա.
րարաշտընըն տըր.

—Սօֆիա Օսմանը քոմիսէրլի.
կի տարէսինտէ սալթանաթը սէ.
նիյէ քոմիսէրը Նէճիպ Մէհմաճ
խըտմէթինտէ պուլունման իթալի.
ալը պիր կէնճ ֆագիրէ գըղա ճէպ.
րէն վէ սուրէթը վահշիանտէ
ֆիլիշինտէ պուլունմուշ օլունուզը.
նը եազըլիյօր

Պիր փայթաթումա ալէմին կէօ.
զիւ էօնինտէ սիվիլիզէ () պիր
օսմանը քոմիսիլի պու կիպի ճի.
նայէթի իրթիքիապ իտէր իսէ.
Անատոլուտա Համիտիյէ օսմանը
քիւրտլէրին ճինայէթի պիր ազ
հաֆիֆէնմէզ մի.

ՄԻԹԵՆԵՎՎԻՅԷ

—o—

Թայմըզ ինկիլիզ կապէթասը,
Աֆղանիստան հուտուտընա 30000
րուս ասքէրի կէօնտէրիլտիկինի
պէյան իտիյօր.

—Ելնի զուպթ օլունման Սու.
տանտա իպատէթ հանէլէր, շըմէն
տրֆէր խաթթըրը վէ թէլէկրաֆ
թէլէրի եաֆըլմագտա իշիշ.

—Մէրհում Չար իքինճի Ալէք
սանտընըն զիքրի նամը իշխն Սօ.
ֆիտա եաֆըլմագ սանէմին րէս
մի քիւշտընտա, Չար Նիքօլա
իմրէրաթօրիշէ իլէ պէրապէր հա.
զըր պուլունմագը թուէն Ֆէրտի.
նանտա պիւտիլիշ տիր.

—Թրանսպալ մուհարէպէսին.

տէ թէլէֆ օլունուտըն ալիլէրինէ
թէլիլի օլունմագ իշխն, 10-րդ
շէհիր էմինի թարաֆընտան թօփ.
լանըլան ազճէնին մզտարը 600,000
ինկիլիզ լիւրաշնա պալիզ օլունու
տըր.

—Մանիլատան վերիլէն պիր
թէլէկրաֆա նազարէն Ֆիլիքինիլի.
լէր Պոմպալար իլէ էճնէպի քօն.
սուրալարը վէ մէմուրէյին էօլտիւր.
մէք իշխն հազըրլանմըշար իսէտէ
մահալի փօլիս թարաֆընտան վագ
թընտա քէշֆ օլունուպ թուլթու.
մըշար տըր.

ՄՈՒՀԱՐԵՊԷ

Հօնորա կապէթալարընըն պէ.
յանաթընա վէ տընան հէնի թէ.
լէկրաֆալարա նազարէն, մուհարէ.
պէնին րէնկի կիթտիքէ տէրիշ.
մէքտէ տիր. կէշէն պիր հաֆիթա
զարֆընտա ինկիլիզլէր էրէյի մու.
աֆիգիլիշէ էլտէ իթմիշլէր տիր.
Թրանսպալ ինկիլիզ օրտուսը
ուսում գոմանտանըլընա թային
օլունման մարէշալ Հօրտ Ռօպէրթըս
հարալ բլանընը շու եօլտա թէր.
թիպ իթմիշ տիր.

Եանի ժէնէրալ Պիլլէր վէ Ուօր.
րըն էլան մուհարէպէտէ պուլուն.
նան Լէտիսմիթէ մուսվէնէթէ կիթ
մէք իշխն պիւսպիլիլէն սէրպէսթ
պրազըրուպ, քէնտիսի 30-40,000
քիշի իլէ սոլըրուտան սոզըրույա
Օրանթ հիւքիւմէթինին փայթաթ.
թը իւզէրինէ ելերիյէճէք իմիշ.

—ժէնէրալ Սըր Չարըզ Ուօր.
րըն 11,000 քիշիտէն միւրէքքէպ
պիր օրտու իլէ թուկէլա չայը
կէշմէկէ մուսֆիգա օլունու տըր.

ժէնէրալ Ուօրըն պիր գաշ
կիւնտէն պէրու թուկէլա չայըն
սահիլնտէ պուլունման Պօէրլէրի
սաթթէ կէօնտէրիլէր իլէ ալտա.
տարագ կէճէլէյին ֆէվգէլատէ սիւ.
րաթ վէ մէհարէթլէ չայը կէշմիշ.
տիր. Պօէրլէր նէտէն սօնրա ֆարգ
իտուպ աթթէ իթմէկէ պաշլամըշ.
լար իսէտէ ինկիլիզլէր Պօէրլէրի
կէրի սիւրէքէք, (Սրիօն ֆօր)
տաղընը թուլթապիլիշլէր.

ժէնէրալ Ուօրըն պու տաղը
զապթ իտէրէք Լէտիսմիթ եօլա.
նուն իւզէրինտէ պուլունմագտա
տըր. ժէնէրալըն մայէթինտէ խայ.
լի լէվազիմաթը հարապիյէ վէ եէյէ.
ճէք պուլունույօր.

ժէնէրալ Պիլլէր տէ Ուօրըն.
նըն տըրաշտընտան կէլմէքտէ օ.
լունա իլք ֆիրսաթուման իսթիֆա.
տէ իտէրէք Լէտիսմիթէ սոզըրու
կիտէճէքլէր տիր.

—Սօտարը ինկիլիզ օրտուսը
գօմանտանը ժէնէրալ Հօրտ Մէ.
թուէնէ գալիշ օրտուտա գալիթ
շիյատէ խօշնուտըլըրզ վօր իմիշ.

—Ինկիլիթէրալան Թրանսպալ
ինկիլիզ օրտուսընա եօլանըլան
պիր թագըմ մաքիւշար սայէսին.
տէ նազիլիթ հէմ չապուք վէ հէմ
տէ լայէթ սուհուլէթլէ օլմագտա
իմիշ.

—Պօէրլէր պաշլընա Չուրուլար

մէմէքթէթինտէն ելէճէք թէտարիք
իթտիլէրի միւսսիպէթի իլէ ժէ.
նէրալ Պիլլէր Չուրուտանա օն
շըմէնտրֆէր զաթարը սիւվարի
ասքէրի եօլամըշ տըր, Պօէրլէրի
օրտուտան չըզարմագ իշխն. Հալ.
պուքի Թրանսպալ հիւքիւմէթին
փայթաթը Բրէթօրիտա տահա
պունտան 3 սէնէքիֆաթ իտէճէք
գատար ելէճէք մէվնուտ պուլըն.
տըղընը չայանը էմինիլէթ մահալ.
լէրտէն պիւտիլիլիյօր.

—Յուլիար 21 թարիսի իլէ Ա.
ժանս Ռիլթէր թէլէկրաֆ գու.
բանեալընա վերիլէն մալիւմաթա
նազարէն ինկիլիզլէր չիտտէթլի
պիր մուհարէպէտէն սօնրա Պօէր.
լէրտէն իւշ էճէմմիլէթլի մէվգի
զապթ իթմիշլէր.

—Լօրէնս Մարքիտէն 4 յմը.
թարիլիլէ պիւտիլիլիյօր. «ԸՍ-
թանտարտ էնտ Տիճճըրս Նիւս»
կազէթասընըն պէյանընա կէօրէ,
ինկիլիզ հիւքիւմէթի, պէօլիւք
պիրինճի Նարօլէն Պօնարաթլըն
հապա օլտուլու Սէն.Էլէն տառաւ.
նըն Լօնկվուտ շէհրինտէ հազըր.
լըզ կէօրմէքտէ իմիշ, Թրանս.
վալ մուհարէպէսինին նիհայէ.
թինտէ, Թրանսպալ Ճուսհուրիլէթ
րէյիսի մէհուր Մ. Գրիւկէրի օ.
րայա սիւրկիլէն վէ հապա իթմէք
իշխն.

Պու հափատիս Պօէլէրի ֆէվ.
գէլատէ մէյուս վէ միւքէտտէր պը.
րագմըշ տըր.

—Սրէրմանսընտան 22 յունվար
թարիսի իլէ Տէյլի Գրօնիլ նամ
ինկիլիզ կազէթասընա վերիլէն
մալիւմաթա նազարէն, ժէնէրալ
Ուօրըն Պօէրլէր իւզէրինէ չիտ.
տէթլի աթթէ պաշլամըշ իսէտէ
տիւշմէն թարաֆընտան մուգապէ.
լէ կէօրմէթիկինտէն մէհպուրի նի.
հայէթ վերմիշ տիր.

—ժէնէրալ Պիլլէրին 22 յուն.
վարտա Լօնտարայա վերտիկի թէ.
լէկրաֆա նազարէն, Պօէրլէր վէ
ինկիլիզլէր պէյինտէ վագու պու.
լան պիր մուհարէպէտէ, ինկիլիզ.
լէրտէն պիր զապիթ վէ 5 նէֆէր
թէլէֆ օլունու, 3 զապիթ վէ 75
նէֆէր եարէլէնմիշ վէ 8 քիշիտէ
զայալ օլունու տըր.

—«Տէյլի-Նիւզ» նամ ինկիլիզ
կազէթասընըն ալմըշ օլտուլու
րէսմի մալիւմաթա նազարէն,
Հարապիյէ նէզարէթի 17 թապուր
մըզըրալը, 7 ալայ Տրակոն վէ
4 պէօլիւքտէ սիւվարի ասքէրի
հազըրլամըշ տըր ճէնուպի Աֆրի.
զայա կէօնտէրմէք իշխն.

—Քէմալըլէյալէն 17 յունվար
թարիլիլէ Պօէրլէրին ինկիլիզ բա.
լէլէրինի չիտտէթլէ թօփա թուլթ.
տուլարընը պիւտիլիլիյօր.

ԹԱՅՏՐՈՆ «ՍԱՆԹՐԱԼ»
(Անկիլ Սալոֆ)

Այս գիշեր, յոնվար 15 «Վէսէլլօ»
խաւար ժամը 8 1/2 ին միւս պատրաս.
տու թիւամը, առաջին անգամ ըլլալով
պիւտի ներկայացնէ «Չինացի աղկան
զոհը» տրամ գոմէտի 4 արարուած.

Խիտ ծէճազաշարժ զաւեշտ մը մէկ
արարուած.

Կիրակի գիշեր յունվար 16ին առա.
ջին անգամ պիւտի ներկայացուի լիւր.
նրաւոր կտակը 4 արարուած.
Ծիծաղաշարժ զաւեշտ 1 արարուած.
Ծանօթ.—Տիւր Արշակ եւ Տիկին
Քնար Սվաճեան իրենց վերջին հիւան.
դուլենէն ապաքինած ըլլալով, պիւտի
մասնակցին այս ներկայացմանց.

ՄԵԾ ՊԻՃԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ



ՄՕՍԻԱ ՔԱՂԱՔԻ			
ՊՈՒԼԱՐ ԿԱՍԱԿԱՐՈՒԹԵՆԷՆ ԵՐԱՄԱՍԻՐԵԱԼ Ա. ՊԱՐԿԵՆԷ Է 300,000 ՅԻ. ՈՍԻ. 50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիւտի շահին հե. տեւալ կերպով, 1900 տարւոյ			
Յունվար 4ին	1500	Թիւեր	101750
Փետրվար 3ին	1500	»	143000
Մարտ 6-7ին	2000	»	249400
Ապրիլ 4-5ին	2000	»	318750
» 25-26ին	2000	»	375300
Մայիս 17 յուն. 7	1600	»	3352800
4539000			

ԳԻՆԵՆ ԵՆ ՈՍԻԱՆ ՊԱՆԿԻՆԷ		ՄԵԾ ՊԻՃԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ	
Կէս	Պարագ	Մէկ ուլիլի	Մէկ ֆր.
6 ֆր.	3 ֆր.	1.50 ֆր.	2 »
8 »	4 »	2.50 »	5 »
10 »	5 »	3.50 »	7 »
14 »	6 »	3 »	6 »
12 »	6 »	3.30 »	1.90 »
6.60			
115.20	57.60	28.80	14.40

Գինը եւ մանրամասն տեղեկութեան համար
պէտք է դիմել Սեպտեմբր Տիւր ՍԱՐԳՍԻ ՊԱՐ.
Բիւլետենի ԳիւլիմիՆՈՐ ԳՈՐԻՆԷԼԻԱԼ աշխատչի
կապէթալար տըր.

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱՎԸ

ՆԵՂԻՆԱԿՈՒԹԻՆ

ՀԱՆՔ. ՏԻՐԱՆ ՄԱՆԱԿԱՆԻ
—II—
Նոր լոյս տեսած այս թատեր.
գուլիլըն ստացած ենք.
Գին 1 ֆրանք. կիւրոնտիլին
է Օնիկ Բարսեղեան Արեւելեան
տպարան.

Վաճառ

ՆՈՐ
ԵՐԳԱՐԱՆ
ԿԱՍ
ՄՐՄՈՒՆՋ ՀԱՅԱԿԱՆ

Կը պարունակէ այսօր ժողո.
վուրդի ամեն դասակարգէ երգուող
հին եւ նոր գրեթէ բոլոր երգերը.
Կը ծախուի ԻՐԱՆԻՆԻՔի խմբա.
գրատունը.

ԳԻՆ 1 ՖՐԱՆԿ

Отговорникъ Н. Драгулевъ
Печ „Взаимность“ — Варна